բունի լեզուով։ Թող պ. Բարխուդարեանցի նման տաղանդաւոր թարգմանիչները չը խնայեն իրանց գործունէութիւնը գրականութեան համար,—իսորին շնորհակալութիւնը նրանց երբէք պակաս չի լինի։ Ասելս այն է, որ նորածին թարգմանական ընկերութիւնը չը պէտք է առայժմ զբաղվի երեխի գրուածներով, քանի որ մենք չունենք դեռ ամենահասարակ գրքեր, չունենք մանկական գրականութիւն, որի պակասութիւնը չափազանց շօշափելի է։ Մեր բազմաթիւ երկսեռ դպրոցները լիքն են երեխաներով,—ահա ում վրա պէտք է մտածենք։ Նրանց ամբողջ լուսաւորութիւնը և զարգացումը սահմանափակվում են միայն չոր ու ցամաք դասագրքերով։ Նրանք չեն մտանում ոչ մի կենդանի, դիւրամարս մտաւոր կերակուր, որ կարելի է քաղել միայն ընթերցանութիւնից։ Իսկ ի՞նչ կարդան խեղճ ողորմելիքը, ի՞նչ են ստեղծել նրանց համար մեր մանանգէտ մանկավարժները, բացի մի երկու կիսատ պռատ թէօրիկական ճառամբանութիւններից,—մի՞թէ «Անեկդոտներով» լայնացնեն իրանց աշխարհայեցութիւնը... Իսկ ինչպէս գրաւում է երեխաներին ընթերցանութիւնը, ինչպիսի բարոյական դասեր են դուրս բերում նրանք մի զեղցիկ գրքոյկից։ Տուեցէք մեր երեխաներին Գուտաով Իմարի, Մայն-Իդի, Հոֆմանի, Կուպերի, Ժիլ-Վերնի հետաքրքիր և նիւթառատ գրքերը, թող նրանք փոխանակ տանը բամբասանքների լեկցիաներ լսելու կամ փողոցներում մէկ մէկու կրծմծելու օրական մի քանի թերթ կարդան այդ գրքերից, և դուք կը տեսնէք թէ որքան փոփոխութիւն կը նշմարվի նրանց զարգացման մէջ։ Այդ գրքերը ոչ թէ միայն հետաքրքիր են, այլ և լիքն են բազմաթիւ տեղեկութիւններով գիտութեան զանազան ճիւղերից։ Ժիլ-Վերնը, օրինակ, իր գրքերում ստիպում է իր կարդացողներին մտաւորապէս ճանապարհորդել երկրագնդի համարեայ բոլոր կողմերը, տեսնել ծովեր, երկրներ, զանազան ազգեր, ծանօթանալ այս կամ այն երկրի աշխարհագրութեան, հասարակական կազմակերպութեան հետ, ըստանալ տեղեկութիւններ բնագիտութիւնից, կենդանաբանութիւնից, բուսաբանութիւնից,—և այդ բոլորը երեխան ըմբռնում է ամենահեշտ կերպով։ Պարզ է այստեղից, թէ ինչ ահագին օգուտ կարող են քաղել երեխաները ընթերցանութիւնից, և ինչ մեծ նշանակութիւն ունի ամեն մի գրականութեան համար մանկական բաժանումը։ Մենք զուրկ ենք դրանից, և դրան պէտք է առայժմ նուիրի իր գործունէութիւնը թարգմանական ընկերութիւնը։

Խօսելով թարգմանութեան վրա աւելորդ չեմ համարում երկու խօսք ասել այստեղ մի բաւական անհասկանալի երևոյթի մասին։ Մենք թարգմանում ենք զանազան եւրոպական լեզուներից, բայց ոչ մի թարգմանիչ մինչև այժմ ուշադրութիւն չէ դարձրել ռուսաց գրականութեան վրա։ Այդ ճշմարիտ զարմանալի է։ Ռուսաց գրականութիւնը, թէև համեմատաբար աղքատ է եւրոպական ուրիշ գրականութիւններից, բայց այնու ամենայնիւ ունի իր հանճարաւոր ներկայացուցիչները որոնց գրուածները անհամեմատ հեշտ կը լի, նեն մեզ համար հասկանալու, քանց գերմանական հեղինակութիւնները։ Եւրոպացիք թարգմանում են ռուսաց բոմանները, իսկ մենք, որ աւելի հեշտ կարող էինք այդ անել, ոչ մի փորձ չենք փորձում։ Ոչ ոք չէ կարող ուրանալ այն հանգամանքը, որ մեր հասարակական և ընտանեկան կեանքը հեռու հեռուէ զարգանում է, կերպարանափոխվում անմիջապէս ռուսաց կեանքի ազդեցութեան տակ։ Ամեն մի նշանաւոր փոփոխութիւնը այստեղ գրանում է արձագանք և մեր մէջ։ Մենք բնականապէս աշխատում ենք նմանացնել մեր կեանքի բոլոր կողմերը իշխող ազգի կեանքի հետ։ Մեր ինտելիգենցիան ամենամօտ կերպով ծանօթ է այդ կեանքի հետ, և մի՞թէ մեր կարդացող հասարակութեան այն մասը, որ զուրկ է մնացել ռուսերէն լեզուից, որ գիտէ միայն մայրենի լեզուն, մի՞թէ նրան հարկաւոր չէ ծանօթանալ ռուսաց կեանքի հետ, որ պատկերացրած է բազմաթիւ ռուս բոմաններում։ Գոգոլը իր անմահ գրուածներով, Տուրգենև, Գոնչարով, Տոլստոյ, Դոստոևսկի, Օստրովսկի,—այդ մի շարք տաղանդաւոր հեղինակներ են, որոնք նկարչական կերպով ներկայացնում են ռուս հասարակութեան բոլոր դասակարգութիւնների կեանքը։ Եթէ մեր թարգմանիչները աշխատում են ծանօթացնել հայ հասարակութիւնը Ֆրանսիայի մինչև անգամ պատմական կեանքի հետ, ինչո՞ւ ուրեմն նրանք չեն մտածում նոյնպէս ծանօթացնել ռուսների ներկայ կեանքի հետ, որ մեզ աւելի մօտ է և հասկանալի *)։ Ինչո՞վ բացատրել այդ երևոյթը։ Ցանկալի կը լինէր որ թարգմանական ընկերութիւնը, եթէ ժամանակ ունենայ, ուշադրութիւն դարձնէր այդ հարցի վրա։

Մոսկվա Ս. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունվարի 12-ին ԹԻՖԼԻՍԻ Հայոց կլուբում եղած ուսանողական ճաշի կարգադրողներից մին, Իշխան Ն. Ամատունի հաղորդում է տեղական ռուս լրագիրներին որ յիշեալ ճաշի ժամանակ հաւաքվեցաւ յօգուտ չքաւոր ուսանողների 773 ր. դումարը, որ արդէն ուղարկվեցաւ մեր փոխադարձ կրեդիտի բանկի միջնորդութեամբ Մոսկվայի համալսարանի ռէկտոր պ. Տիմոֆիրովին աղքատ ուսանողներին բաժանելու համար։

—

„Тифл. Вѣстн.“ լսել է, որ Ամերիկայից բերվեցաւ ՓՕԹԻ հացի մեծ քանակութիւն։ Բերված հացի մի մասը արդէն հասել է Թիֆլիս և ինչպէս լսվում է այդ առաջին հարկաւորութեան մթերքի մեզ մօտ բերելը աւելի էժան նստեց, քան թէ մեր երկիրը Ռուսաստանից հացի բերելը։

—

„Тиф. Вѣстн.“ լրագրին ՄՕՍԿՎԱՑԻՑ հաղորդում են, որ այս օրերս վախճանվեցաւ Մոսկվայի հիւանդանոցներից մինի մէջ նշանաւոր ռուս երաժիշտ ջութակ ածող Հէնրիխ վ. Ենեավսկի, որ յայտնի է նոյնպէս մեր Թիֆլիսի հասարակութեանը։ Դեռ 1870 թվին և նոյնպէս անցեալ 1879 թվին հանդուցեալը մի քանի կոնցերտներ էր տուել Թիֆլիսում և միշտ այդ կոնցերտները գրաւում էին լսողների մեծ բազմութիւն։ Թիֆլիս թողնելուց յետոյ վ. Ենեավսկի գնացել էր Ղրիմի Թէոդոսիա քաղաքը բժշկվելու համար։

—

Վրաց „Դրօէբա“ լրագիրը հաղորդում է որ ԹԻՖԼԻՍԻ ռուսական հոգևոր դպրոցում, որ գտնվում է Կուկիա թաղում, աշակերտները շատ վատ են կերակրվում, չունեն օրինաւոր հագուստներ և գրեթէ ոչինչ ուսում չէ աւանդվում մանուկներին։ Բացի սրանից ամբողջ ձմեռը ուսումնարանի շինութիւնը չէր տաքացվում։ Աշակերտների դրութիւնը շատ աննախանձելի է։

—

ԹԻՖԼԻՍԻ արհեստագործական Միխայէլեան դպրոցի պրոգրամմը արդէն մշակված և հաստատված է մեր քաղաքի Դումայից։ Մնում է այժմ այդ կանոնադրութեան հաստատելը ուսումնարանական իշխանութիւնից։ Կանոնադրութենից երևում է որ հայոց և վրաց լեզուները կաւանդվեն դպրոցում ռուս լեզուի հետ հաւասարապէս։ կաւանդվեն նոյնպէս ռուսաց, հայոց և վրաց պատմութիւնները։

—

„Голосъ“ լրագրին հաղորդում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ որ հարաւային Անդրկովկասում հացը այնքան թանգ է, որ առնելը բոլորովին մատչելի չէ ամբոխի մեծամասնութեանը։

—

„Тифл. Вѣстн.“ լրագիրը լսել է, որ Դաւիթ Չխոտուա որ մեղադրվեցաւ օրիորդ Նինա Անդրիեվսկու սպանութեան մէջ, դատապարտվեցաւ աքսորանքի և արդէն ուղարկվեցաւ Սիբիր։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունվարի։ Երէկ ոչնչացան խոստով բարձված 35 բեռնակիր նաւակներ։ Վնասը հարիւր հազար բուբլից աւելի է։

ՆԻԿՈԼԱԵՎ, 18 յունվարի։ Այստեղի պետական բանկի բաժանմունքի մէջ 10,000 բուբլի գողութիւն յայտնվեցաւ. յանցաւորները կալանաւորված են։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

պիտի հանդիսանան, այն ժամանակ մեզ համար ակնյայտ կը լինի թէ որքան մեծ նշանակութիւն պիտի ունենան մեզ համար գիւղական դպրոցները, և թէ մեր բոլոր ուշադրութիւնը պէտք է դարձնել այժմ գիւղական ժողովրդի կրթութեան վրա։ Սրանից լօգիկաբար հետևում է թէ որքան վեհ և փափուկ է «Արարատ. ընկ.» պաշտօնը, իբրև այժմ միակ հզօր հաստատութեան, որ ձգտում է այդ նպատակը իրականացնել. սրանից նոյնպէս լօգիկաբար հետևում է, թէ որքան մեծ պիտի լինի իւրաքանչիւր հայ անհատի բարոյական պարտաւորութիւնը դէպի այդ ընկերութիւնը—համեմատաբար դրան մեծ և խիստ պիտի լինի մեր պահանջը ընկերութիւնից իր պարտաւորութիւնները կատարելու մասին։

Այս բոլոր ասածից հեշտ է իմանալ թէ առայժմ «Արարատ. ընկ.» գլխաւոր պաշտօնը և ջանքը պէտք է լինի նախապատրաստել գիւղացի ժողովուրդը և նրան հասցնել կրթութեան մինչ մի այնպիսի աստիճան, որ նա ինքը յետոյ կարողանայ մտածել իր տնտեսական դրութեան բարելաւման վրա, որովհետև այժմ դպրոցների և այն ևս գիւղական դպրոցների միջոցով հասնել այդ նպատակին (ժողովրդի տնտեսական դրութիւնը բարելաւելու) բոլորովին անհնար է և դրա պատճառը շատ պարզ է. պէտք է ժողովրդին յաջորդաբար պատրաստել խաւարից լոյսի մէջ մտնելու համար, պէտք է առաջ ազատել նրան մոտի աւանդութիւններից և նախապաշարումներից։ Նոյնչափ հեշտ է իմանալ, թէ «Արարատ. ընկ.» վերոյիշեալ ուսումնական յայտագիրը իրեն ուղղութիւն բռնելով հակառակ իր ցանկութեան և նպատակին, չը պիտի կարողանայ այդ պաշտօնը կատարել և միայն գրագիտութիւն տարածել կարող է գիւղական ժողովրդի մէջ։ Դպրոցը այդ ուղղութեան չնորհիւ ոչինչ կապ չունի կեանքի հետ, ուստի և անկարող է գիւղացի մանկտոյն տալ այն գիտութիւնները, որ նա կարողանայ յետոյ ինքնուրոյն կերպով ժողովրդական գրքերի միջոցով իր կրթութիւնը շարունակել, զրանից կարող է յառաջանալ այն հանգամանքը, որ գրագէտ գիւղացին վերջում մինչև անգամ կարող է մոռանալ գրագիտութիւնը։ Ինչպէս տեսնում ենք այդ դպրոցների գլխաւոր պակասութիւնն այն է, որ նրանք չեն բէալական-ժողովրդական դպրոցներ, նրանք չեն աւանդում ոչ մի բէալական գիտութիւն (ի հարկէ այն պրոգրամմայով, որքան կարելի է գիւղական դպրոցների մէջ, օրինակ-գերմանական դպրոցները)։ Դա մի խոշոր և աններելի պակասութիւն է ժողովրդական կեանքի մէջ։ Միայն բէալական-ժողովրդական դպրոցները կարող են հայթայթել գիւղացուն կարողութիւն իր տարրական կրթութիւնը շարունակելու ապագայում, դպրոցից դուրս, միայն նրանք կարող են և նրանք պէտք է տարածեն հասարակ, մշակ դասի մէջ գործնական տեղեկութիւններ—գիւղատնտեսական, տէխնիքական և արհեստական։ Բէալական—ժողովրդական դպրոցներն են այն միակ միջոցը, որ կարող է ժողովրդի արդիւնագործութիւնը լաւացնել, գիւղատնտեսութիւնը բարձրացնել, տնտեսական դրութիւնը բարելաւել։ Այստեղ ի հարկէ, մենք չենք կարող բացատրել թէ ինչ բան է բէալական—ժողովրդական դպրոցը, որովհետև դա լրագրական յօդուածի չրջանից դուրս է, այլ միայն կը ցանկանք բացատրել „Արարատ. ընկ.“ նպատակի և գործունէութեան հակասութեան պատճառը, այսինքն պատասխանել այն հարցմունքին, որ վերևում արինք։

Մեր կարծիքով երկու գլխաւոր պատճառ կայ։ Առաջինը այն բոմանտիկական, իդէալական (ոչ—բէալական) ուղղութեան ազդեցութիւնն է, որից դեռ չեն կարողացել ազատուել «Արարատ. ընկ.» վարչութեան անդամները։ Այդ ուղղութիւնը, որի մասին վերևում խօսեցինք, այնքան խոր արմատներ է արձակել, որ չատ ջանքեր պէտք է գործի դեռ առողջ, թարմ բէալականութիւնը, որ կարողանայ յաղթել։ Նոյն իսկ Ֆրանսիայում բոմանտիկական և բէալական բանակները դեռ մինչ այսօր պատերազմում են, երկուսն ևս իրենց պարագլուխ ունենալով միակերպ հանճարեղ գրիչներ—Վիկտոր Հիւգո և Էմիլ-Զոլա։ Երկրորդ և գլխաւոր պատճառը, ուրեմն և աւելի հիմնաւորը այն է, որ «Արարատ.» ընկ. վարչութեան անդամները, թէև լուսաւորեալ, կրթված, ազգասէր և եռանդոտ ազնիւ երիտասարդներ, արդիւնաւոր հասարակական գործիչներ են, բայց բոլորովին անտեղեակ մանկավարժական և դպրոցական գործին, նոյն իսկ պ. Փորթուգալեան, վարժապետանոցի տեսուչը, որը վաղուց յայտնի է իբրև յաջողակ պուբլիցիստ, բոլորովին անյարմար է այդ պաշտօնին մանկավարժական տեսակէտից նայելով, որովհետև ուսուցիչ—մանկավարժ լինելու համար հարկաւոր չէ միայն ընդհանուր կրթութիւն, լաւ գրիչ, ազդասէր, եռանդոտ լինել (ինչպէս է պ. Փորթուգալեան) այլ պէտք է մասնագէտ լինել։ Այս երկրորդ պատճառի հիմնաւորութեան իբրև ակնյայտ և անհերքելի ապացոյց—վարժապետանոցն է, կամ նորա ուսումնական յայտագիրը։ Վարժապետանոց անունը արդէն ցոյց է տալիս թէ նորա գլխաւոր նպատակն ուսուցիչներ պատրաստել է և եթէ մտաբերենք վերևում ինչ որ գիւղացու մասին ասուեցաւ, կը տեսնենք, որ հայ ժողովրդի ապագայի և բախտի համար այդ վարժապետները մեծ նշանակութիւն ունեն։ Ուսման չրջանը 8 տարի է, 4 նախակրթարաններում և 4 տարի վարժապետանոցում, իսկ այդքան ժամանակում կարելի է եթէ ոչ ընտիր, գոնէ բաւականին հմուտ ուսուցիչներ պատրաստել։ Այժմ, ինչ էք կարծում, ընթերցող. 5 տարի ուսանելով համեմատ այն ծրագրին, որ առաջարկում է «Արարատ.» ընկ.» այդ ուսուցիչները այնքան կարող են վարժապետութիւն անել, որքան կօշկակարը կարող է դերձակութիւն անել։ Ոչ մի բնական գիտութիւն չը գիտէ այդ ուսուցիչը (ուրեմն և ոչինչ չը գիտէ), այդ բաւական չէ, նա չը գիտէ և գաղափար չունի դասաւանդութեան և նորա եղանակների վրա, նա չէ կարող քննել երեխայի բնաւորութիւնը, հասկանալ նորան, ուրեմն և ազդել նորա վրա, որովհետև այդ ուսուցիչը վարժապետանոցում չէ սովորել մանկավարժութեան և հոգեբանութեան (պսիխօլօգիայի) և լօգիկայի գոնէ տարերքը։ Իսկ առանց այդ գիտութիւնների երևակայել ուսուցիչ, մենք չենք հասկանում.... Իբրև ապացոյց ահա վարժապետանոցի 4 ամեայ ամբողջ ծրագիրը. հայերէն լեզու, կրօն, ֆրանսիերէն կամ անգլիերէն, տաճկերէն, տիեզերական պատմութիւն, չափաբերութիւն, աշխարհագրութիւն (քաղաքական և ուսումնական—(կարծես թէ խեղճ աշխարհը մեղաւոր է երկինքի առաջ, որ ֆիզիքական աշխարհագրութիւն դուրս են ձգել պրոգրամմայից), գեղագրութիւն, գծագրութիւն, մարմնամարզութիւն, երաժշտութիւն։

Բացի այն հանգամանքը, թէ ինչի ընկերութեան վարչութիւնը զանց է արել դիմելու մասնագէտ մանկավարժների յայտագիրը կազմելու ժամանակ, մեզ մի բան ևս չատ զարմացնում է, որ ամբողջ Ցանկատանի հայերի մէջ մինչև այսօր չը գտնուեց մի անձ, որ հասկանար այդ ծրագրի պակասութիւնը և «Արատ. ընկ.» սխալ ուղղութիւնը ուսումնական և դպրոցական գործի մէջ։ Շատ տխրալի է, որ Կ. Պոլսի հայ երիտասարդները խմբերով վազելով ֆրանսիական համալսարանները միայն բժիշկ և բման թարգմանողներ կամ գրողներ են դուրս գալիս. եթէ կան և մի քանի մանկավարժներ, դոքա Գերմանիայի հոգևոր-դպրոցներում ուսած հայ բողոքական քարոզիչներն են։ Միւս կողմից նոյնքան դատապարտելի է և Ռուսաստանի հայ մանկավարժ— մասնագէտների լռութիւնը, մանաւանդ պ. Սեդրակ Մանդինեանի, որ մինչև անգամ անձամբ այցելել է այդ վարժապետանոցը և որը, իբրև մասնագէտ—մանկավարժ, ամենից առաջ պէտք է ցոյց տար այդ մեծ պակասութիւնը։

Անտարակոյս ենք, որ «Արարատ. ընկեր.» վարչութիւնը ուշադրութիւն դարձնելով մեր քննադատութեան վրա, խորամուտ կը լինի և կը շուտ թէ որ ատիճան ճշմարիտ է նա, մի և նոյն ժամանակ, կը ներէ մեզ, եթէ մենք նոյն իսկ ընկ. օգուտը պաշտպանելու համար, փոքր ինչ խստութեամբ խօսեցինք։ Այլապէս չէինք կարող։ Ցանկալի կը լինէր, որ Կ. Պոլսի մամուլը իր կողմից ևս ուշադրութիւն դարձնէր այդ հանգամանքի վրա և իրականապէս օգնէր «Արար. ընկեր.» իր ցանկալի նպատակին հասնելու։

Համ. Առաքելեան.

Մոսկվա

---

*) Մեր ուսանողներից մէկը թարգմանել է Գոգոլի երևելի «Ревизоръ» կոմէդիան։ «Փորձի» խմբագրութիւնը առանց թարգմանութիւնը կարդալու, մերժել է ուսանողի առաջարկութիւնը, ընդունել տպագրութեան համար։ Ինչով բացատրել։ Ն. Նամ.